ԿԱՆԹԵՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խորհրդանիշների իմաստը և գաղափարական բովանդակությունը խաչքարերի մասին

Կազմող՝ Բոջուկյան Սամվել

Բովանդակություն

1. Ներածություն ……..3

Գլուխ 1. Խաչքարեր: Խաչքարերի պատկերագրությունը …….…5

Գլուխ 2. Խորհրդանիշները խաչքարերում:

2.1. Համաչափությունը խաչքարերում:……12

2. Փորձարարական մաս ……...14

3. Եզրակացություն …….16

4. Օգտագործված գրականության ցանկ…… 18

Ներածություն

Խաչքարերը մեր լավագույն ճարտարապետական կառուցվածքներին համազոր ստեղծագործություններ են, որոնք պետք է արվեստի պատմության մեջ գտնեն իրենց արժանի տեղը՝ դուրս գալով մեծ ու լայն արվեստի ասպարեզ:

Ռաֆայել Իսրայելյան

Խաչքարը քարարվեստի ուրույն, զուտ հայկական դրսևորում է թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Հայ մարդը իր քարաշատ երկրի պարզ, անշունչ քարը կարողացավ դարձնել գեղեցկության, հիշատակի, հավատի ու պաշտամունքի խորհրդանիշ:

Խաչքարը հայ միջնադարյան մշակույթի ամենատարածված արտահայտություններից է և հայ ժողովրդի ստեղծագործական ինքնատիպության ամենաբնորոշ վկայականը: Հայտնի են հատկապես Նորադուսի, Սաղմոսավանքի, Նորավանքի, Ջուղայի (Նախիջևան) խաչքարերը:

«Հայ ժողովրդի կողմից քաղաքակիրթ աշխարհին անցած յուրօրինակ, չթարգմանվող բառերից է «խաչքարը»՝ քարի մշակման մի զարմանահրաշ բնագավառ, որը հին և միջնադարյան իրականության մեջ տարածված է եղել բացառապես պատմական Հայաստանի տարածքում և բոլոր այն վայրերում, ուր ոտք է դրել հայ մարդը»,- գրել է պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը:

Ի՞նչ է մեզ համար այսօր խաչքարը, մեր քրիստոնեական կրոնի այդ նշանը, խորհրդանիշը, խարանադրոշմը: Քարերի վրա խաչեր՝ զուգակցված զարդաքանդակների հետ, կարելի է տեսնել ողջ պատմական Հայաստանի տարածքում: Դրանք այսօր էլ հուզում են մեզ: Հիմա ավելի, քան երբևէ:

Խաչքարն ընդամենը քարե դեկորատիվ կոթո՞ղ է, որը խորհրդանշում է մեր անսասան հավատը Քրիստոսի ուսմունքի նկատմամբ, պատմական հիշողությո՞ւն, թե՞ մի այլ բան: Իսկ գուցե եւ՛ այս, եւ՛ այն միաժամանա՞կ: Իսկ գուցե մի երրորդ բան է, ասենք՝ մեր կենցաղի մի մասը: Եվ եթե խաչքարը նշան է ու խորհրդանիշ, ապա ի՞նչ է այն խորհրդանշում, ի՞նչ են խորհրդանշում խաչքարի քարե դեմքերը, ֆիգուրները, նախշերը, ժանյակները: Եվ ի՞նչ իմաստ ունի այդ ողջ գեղարվեստական-

գաղտնախորհուրդ համակարգը, եթե, իհարկե, այդ համակարգը գոյություն ունի: Խաչքարը ազգային ինքնագիտակցության խորհրդանի՞շ է, թե՞ մի այլ բան: Ամեն դեպքում խաչքարի պատմությունն ավելի շուտ հիշեցնում է ժողովրդի ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ կյանքի կարդիոգրամա: Զարմանալի է, բայց խաչքարը դարձել է Հայաստանի մեծ քարե գրքի մի մասը, որի էջերը նրա սալաքարերն են, նրա տաճարների ու եկեղեցիների պատերը…

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել խաչքարերը, խորհրդանիշների դերը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- ✓ Նկարագրել խաչքարերի տեսակները, խորհրդանիշները, նախշերի նկարագրությունը
- ✓ Բացահայտել խորհրդանիշների գաղափարական նշանակությունը, դերը խաչքարերի մասին
- ✓ Իրականացնել փորձարարական աշխատանք՝ միտված պարզելու հայկական խաչքարերի մասին աշակերտների իմացության աստիճանը, զբոսաշրջիկների հետաքրքրությունը խաչքարերի նկատմամբ

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Խաչքարեր: Խաչքարերի պատկերագրությունը

Թեմայի արդիականությունը:

Գրեթե բոլոր հայկական հոգևոր կառույցները զարդարված են խաչքարերով: Բազմաթիվ եկեղեցիների պատերին կարելի է տեսնել փորագրված խաչի պատկերներ, որոնք իրենց հատուկ նշանակությունն ունեն: Հայերն այնքան մեծ հարգանք և պաշտամունք էին ստեղծել խաչերի շուրջ, որ այս խորհրդանիշը քարտաշ վարպետներին ստիպեց ստեղծել արվեստի այս յուրահատուկ գլուխգործոցները:

Հայաստանն առանձնահատուկ մի երկիր է, որտեղ կան ավելի քան 50 000 ձեռատաշ խաչքարեր, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ: Յուրաքանչյուր խաչքար ունի իր զարդանախշը, դարերի խորքը գնացող պատմությունը: Խաչքարերը, որոնք հաճախ կշռում են մի քանի տոննա, պահանջում են ծանր աշխատանք, տաղանդ և հսկայական ժամանակ: Աշխարհում ոչ մի ազգ չի անցել այսպիսի մեծ և երկարատև ճանապարհ՝ Աստծո հանդեպ իր հավատն արտահայտելու համար: Խաչքարը հիմնականում ստեղծվում է հրաբխային բազալտից կամ տուֆից: Խաչքարի ներքևի մասում փորագրվում է Արևի (Հավերժության) խորհրդանիշը, որի կենտրոնում պատկերվում է խաչը՝ Քրիստոսի խաչելության խորհրդանիշը: Խաչքարը շրջեզրվում է 5 նախշերով կամ խաղողի ու տերևների զարդաքանդակներով, որոնք խորհրդանշում են Քրիստոսի հարությունը: Խաչքարերը ստեղծվել են այն ժամանակ, երբ Հայաստանը 301 թվականին քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն և դարձավ աշխարհի առաջին քրիստոնյա երկիրը: Հայերի համար դա Քրիստոսի հարության խորհրդանիշն է՝ մահի դեմ նրա հաղթանակը: Խաչքարերը ծառայել են որպես տապանաքար՝ կարևոր իրադարձությունների առիթով, ինչպիսիք են ճակատամարտերում հաղթանակները, եկեղեցիների, տաճարների, ջրատարների կառուցումը:

Դրանք տեղադրվում էին սրբավայրերում, գերեզմանատներում, ճամփեզրերին, ինչպես նաև բլուրների ու ժայռերի վրա: Որոշ դեպքերում, օրինակ Գեղարդում, որն անկրկնելի ժայռափոր վանք է, խաչքարերը տեղադրված են պատերի վրա: Խաչքարերը համարվում էին սուրբ քարեր, և այն վայրերը, որտեղ տեղադրված էին

դրանք՝ սրբատեղիներ: Խաչքարեր մեծ քանակությամբ քանդակվել են 12-13-րդ դարերի ընթացքում. բոլոր ժամանակների մեծ վարպետներ Մոմիկն ու Պողոսը խաչքարեր են արարել հենց այդ դարերում: Խաչքարի ստեղծման բարդ և պատասխանատու գործը վստահել են միայն նրանց, ովքեր խորապես հավատում էին Աստծուն և ունեին բնատուր անգերազանցելի տաղանդ, քանզի խաչքարերը համարվում էին տեղի սրբավայրի նշան: Չնայած, որ օտարերկրյա և, մասնավորապես, ոչ քրիստոնյա զավթիչները դարեր ի վեր փորձել են ոչնչացնել հայկական արժեքները, բազմաթիվ գեղեցիկ աշխատանքներ պահպանվել են: Այդպիսիք կարելի է տեսնել Գոշավանքում, Դադիվանքում և այլ վայրերում: Քարը հուշարձանի վերածելու բացառիկ ձիրքը կարծես փոխանցում է Աստծո խոսքը, դրանով իսկ, սովորեցնելով սերունդներին: Հատկապես 13-րդ դարից հետո բազմաթիվ խաչքարեր են ոչնչացվել կամ վնասվել օտարերկրյա զավթիչների կողմից, սակայն խաչքարեր կերտելու ավանդույթը երբեք չի մոռացվել, և մինչ այսօր շատ հայեր զբաղվում են խաչքարերի մշակույթով: Հայաստանում պահպանված ամենահին խաչքարը Աշոտ Ա Բագրատունու կնոջը՝ Կատրանիդեին նվիրված խաչքարն է:

Այն թվագրվում է 879-ին և գտնվում է Գառնու հեթանոսական տաճարի տարածքում:

Հին հայկական գերեզմանատները հարուստ են մարդկության հիասքանչ այս գործերով: Սրա ապացույցն է Նորատուսում գտնվող միջնադարյան գերեզմանատունը, որտեղ կա մոտ 900 խաչքար, որոնցից մի քանիսը ունեն 1,5մ բարձրություն: Խաչքարերը սփռված են պատմական և արդի Հայաստանի ամբողջ տարածքում: Այդ է պատճառը, որ Հայաստանը համարվում է «թանգարան բաց երկնքի տակ»: Հայաստանի ամեն մի թիզ հողի վրա խաչքար կա: Կոթողային հուշարձանների այս հիասքանչ նմուշները հային ուղեկցում են դեռ 4-5-րդ դարերից: Հայն իր ստեղծագործական միտքն այս ոլորտում կատարելության է հասցրել տարիների ընթացքում, արդեն 10-րդ դարում մեր խաչքարագործ վարպետներն այնպիսի նմուշներ էին ստեղծում, որոնց ասես մատ չէր դիպել, քարն այնպիսի ձևեր ու փորվածներ էր ստանում, որ անգամ դժվար էր պատկերացնել, թե դրանք հնարավոր էր ստանալ անգամ թելի ու ասեղի օգնությամբ:Խաչը՝ քրիստոնեության

խորհրդանիշը, խաչքարի հիմքն է: Ամեն մի թևի մեջ ժողովուրդն իր խորհուրդն ու իմաստնությունն է դրել:

Խաչի վերևի թևը խորհրդանշում է երկնային արքայությունը, ներքևի թևը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողությունը: Խաչքարի ներքևում նաև վանդակ կա, որն արևապաշտության խորհրդանիշն է ու հավերժության խորհուրդն ունի իր մեջ: Խաչքարերը նաև կոդավորած ու գաղտնագիր տեղեկություն են ունեցել իրենց մեջ: [3, էջ 54]

Օրինակ, եթե մի ձեռքով փակենք խաչքարի ձախ թևը, ապա մնացած թևերը ներքևի պտտվող վանդակի հետ կկազմեն այբուբենի է տառը, այն նշանակում է էություն, այսինքն՝ աստված: Այս ամենն իմացել են խաչքարագործ մեր վարպետները: Խաչքարերը, որպես կանոն կառուցվել են այնպես, որ նայեն դեպի արևմուտք,որպեսզի խաչքարի դիմաց կանգնած մարդը նայի դեպի արևելք:

Հայ ժողովրդի համար արևելքը միշտ էլ կյանքի սկզբնավորման խորհուրդ է կրել, արևը ծնվում է արևելքում և գնում մեռնում է արևմուտքում: Խաչքարն, ինչպես արվեստի ցանկացած նմուշ, իր կատարելագործմանը հասել է ժամանակի ընթացքում: Եթե առաջին խաչքարերն աչքի էին ընկնում իրենց պարզ ոճով՝ միայն խաչն էր քարի վրա, ապա հետագայում արդեն դրանք ավելի գունավորում ստացան, հղկվեցին ու շատացան նախշերը, յուրաքանչյուր նահանգ ունեցավ իրեն բնորոշ ոճն ու պատկերաքանդակները, ճիշտ ու ճիշտ գորգերի ու տարազների նման: Խաչքարերում կենտրոնական խաչի շուրջբոլորը պատկերվել են հայկական խորհրդանիշներ՝ նուռ, խաղող, ծիրան, ամեն ինչ հավասարաչափության սկզբունքով է արվել, ավելորդ ոչինչ չկա: Խաչքարեր սովորաբար դրվել են եկեղեցիների մոտ, գերեզմանոցներում: Խաչքարերի անտառ անունը ստացած, հայկական իրականության մեջ ամենահայտնի խաչքարախմբերից մեկը՝ Ջուղան արդեն գոյություն չունի: Խաչքարագետ, նախիջևանագետ Արգամ Այվազյանի խոսքով՝ <Ջուղայի խաչքարերն իրենց տեսակով եզակի էին ու փաստում էին հայկական ստեղծագործ մտքի թռիքչի մասին: Այսօր մոտ 1000 տարվա պատմություն ունեցող այդ խաչքարերը կանգուն են միայն լուսանկարներում>: Խաչքարեր այսօր էլ

ստեղծվում են ու շարունակում են հարստացնել արվեստի այս ճյուղի հազարամյա ավանդույթները:

Մենք կարծում ենք, որ խաչքարերը հետաքրքիր են և գիտնականները դեռ շատ կարող են ուսումնասիրել և գտնել գաղտնիքներ, որոնք կապված են խաչքարերի հետ: Խաչքարերը մեզ շատ հետաքրքրեցին, քանի որ նրանք ունեն շատ հետաքրքիր պատմություն:

Գլուխ 1.1. Խորհրդանիշները խաչքարերում

Հայոց գրեթե բոլոր հոգևոր կառույցները զարդարված են խաչքարերով: Բազմաթիվ եկեղեցիների պատերին կարելի է տեսնել փորագրված խաչի պատկերներ, որոնք իրենց հատուկ նշանակությունն ունեն: Փոքրիկ խաչերը պատկերվել են ի պատիվ հովանավորների և բարեգործների, ում ջանքերով կառուցվել կամ բարեկարգվել էր տվյալ եկեղեցին: Հայերն այնքան մեծ հարգանք և պաշտամունք էին ստեղծել խաչերի շուրջ, որ այս խորհրդանիշը քարտաշ վարպետներին ստիպեց ստեղծել արվեստի այս յուրահատուկ գլուխգործոցները, որոնք, իրենց բովանդակությանը համահունչ, կոչվեցին խաչքար:

Հայոց աշխարհում խաչքարեր կան գրեթե ամեն անկյունում: Խաչքարերը երբեք չեն կրկնվում: Խաչքարի գլխավոր նպատակն է կապ ստեղծել Աստծո հետ:

Խաչը, որպես խորհրդանիշ, մեզանում առաջացել է դեռևս 4-րդ դարից սկսած: 4-7-րդ դարերում դրանք ունեցել են շատ պարզունակ պատկերներ: 7-րդ դարից հետո ի հայտ են գալիս թևավոր խաչքարերը, որոնցից շատ քչերն են այսօր պահպանվել: 8-րդ դարից հետո սկսում են հայտնվել արդեն ուղղանկյուն կանգուն խաչքարերի տեսակները: Իսկ արդեն 11-րդ դարից հետո ձևավորվում է, որպես ներկայիս հայտնի խաչքար հասկացությունը՝ իր մեջ կրելով բոլոր երկրաչափական և բուսական տարրերը: Հետագայում արդեն այն իր մեջ սկսում է կրել նաև պատկերային քանդակներ՝ ինչպիսիք են, օրինակ՝ սրբերի պատկերները:

Խաչքարերի առաջացման վարկածներից մեկն էլ կապված է այն փաստի հետ, որ ժողովուրդը ցանկացել է քրիստոնեության մասին ավելի շատ լուռ վկայություններ ունենալ: Իսկ խաչերի տեղադրումը հանդիսացել է, որպես քրիստոնեության տարածման բավականին ազդեցիկ միջոց:

Խաչքար կանգնեցնելու շարժառիթները բազմաթիվ են: Կան խաչքարեր, որոնք կանգնեցվել են ինչ-որ հաղթանակների առիթով: Կան խաչքարեր, որոնք դրվել են ճանապարհների վրա: Կան նաև այսպես կոչված փրկիչ խաչքարեր:

Խաչքարերն ուղղանկյուն կոթողներ են, որոնք տեղադրվում են եկեղեցիների բակերում ՝ ի հիշատակություն քրիստոնեության ընդունման, ազգային տոների կամ նահատակների:

Խաչքարագործ վարպետն ինքն է ընտրում խաչքարի ոճն ու պատկերները: Խաչքարի հիմնական հումքը <u>դեղնակարմրավուն տուֆն</u> էր: Սկզբում փորագրվում էր խաչը, այնուհետև այն զարդարվում էր ազգային խորգրադանիշ հանդիսացող խաղողի և նռան պատկերներով:



Խաչքարի ստորին հատվածում շատ հաճախ փորագրվում է նաև հավերժության նշանը, որը նույնպես հեգևոր խորհրդանիշներից մեկն է: Այն խաչի հետ միասին

խորհրդանշում է կյանքի շարունակականությունն ու ազգային պատկերացումները հավատի մասին: Խաչքարի ամենայուրահատուկ հորինվածքի տարրն իր անվերջությունն է:

Խաչքարերի վրա գոյություն ունի 5 կարևոր և նվիրական կետ: Դրանցից չորսը համապատասխանում են խաչի թևերի ծայրերին, իսկ մեկը դրանց հատման կետն է: Հատման կետը միջնադարում կոչվել է նաև ակ, որը հանդիսացել է խաչի ամենակարևոր կետը: Վերևի կետը կոչվում է թագ, որը խորհրդանշում էր երկնքի արքայությունը: Ներքևի կետը խորհրդանշում էր դժոխքի կործանումը: Աջ կողմը կապված էր շնորհների բաշխման հետ, իսկ ձախ կողմի ծայրը՝ մեղքերի ներման:
Շատ կարևոր է նաև խաչքարերի տեղադրելու կարգը, որի ամենակարևոր դրվագը դրանց օծումն է: Նախ օծվում է խաչի ակը՝ կենտրոնը, այնուհետև թագը՝ այսինքն խաչքարի վերին մասը, այնուհետև աջ և ձախ կողմերը, իսկ վերջում արդեն ստորին հատվածը՝ բունը: Օծելության կարգը իրականացվում է հատուկ շարականներով:

Ամենափրկիչ խաչքարեր

Հայկական խաչքարագործության հազարամյա պատմության մեջ կերտվել են բազմաթիվ խաչքարեր: Սակայն այդ բազմաթիվ խաչքարերից միայն 4-ի վրա է պատկերված Քրիստոսը: Խաչքարերի վրա պատկերված է հիմնականում Քրիստոսի խաչելության և խաչից իջեցման տեսարանները: Այս խաչքարերն էլ հենց կոչվել են ամենափրկիչ: Եվ հարց է առաջանում, թե ինչու են այս խաչքարերը կոչվել ամենափրկիչ: Հնում հավատացյալները վստահ են եղել, որ այս խաչքարերն ի վիճակի են եղել բուժելու տարբեր հիվանդություններ, կամ փրկելու չարից, այդ պատճառով էլ այս տեսակի խաչքարերը ձեռք են բերել որոշակի իմաստավորում:

Հայաստանում հայտնի բոլոր ամենափրկիչ խաչքարերը ստեղծվել են 12 տարվա ընթացքում: Ամենահին ամենափրկիչ խաչքարը գտնվում է Հաղպատում և թվագրվում է 1273թ: Ըստ խաչքարի վրայի արձանագրության այն կանգնեցրել է համալիրի եպիսկոպոսը:

Մյուս երեք ամենափրկիչ խաչքարերից երկուսը գտնվում են Էջմիածնում: Դրանցից մեկը փորված է փայտի վրա և Էջմիածնի թանգարան է տեղափոխվել Հավուց Թառ վանական համալիրից: Մյուս՝ չորրորդ ամենափրկիչ խաչքարը, գտնվում է Դսեղ գյուղում:

Նորատուս գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ Գավառ քաղաքից 5 կմ հեռավորության վրա: Նորատուսը համարվում է Գեղարքունիքի մարզի ամենահին բնակավայրերից մեկը: Գյուղի գերեզմանատունը հայտնի է իր բազմաթիվ խաչքարերով: Այն ալ կերպ կոչվում է նաև Նորատուսի խաչքարադաշտ:

Այստեղ կանգնեցված է մոտ 1000 խաչքար: Որանցից ամենահինը 9-րդ դարի է, սակայն մեծամասնություն են կազմում 13-14-րդ դարերի խաչքարները: [1, էջ 28]

Ըստ լեգենդի սելջուկ թուրքերի բանակն իր մեծաթիվ զորքով դուրս է գալիս Գեղամ արքայի զորքի դեմ: Հայերի զորքը փոքրաթիվ էր և թագավորը զորքին հրամայում է հագուստներ հագցնել խաչքարերին: Հեռվից նայելիս Սելջուկների զորքին թվում է, թե հայերը մեծաքանակ զորք ունեն և սկսում են խուճապի մատնվել և փախչել: Այդ ամենի շնորհիվ հայոց զորքը հաղթանակ է տանում:

Հայերը ժամանակի ընթացքում քանդակել և կանգնեցրել են մոտ 50 000 խաչքար, չնայած, որ այսօր դրանցից շատերը կանգուն կամ ամբողջական չեն: Թշնամիների

հարձակումների, արհավիրքների և վայրագությունների հետևանքով դրանց մի մասը ոչնչացվել է, իսկ մնացյալ մասը շարունակում է մնալ վտանգված:

2010թ. -ին հայկական խաչքարի արվեստը, խորհուրդը և խաչքարագործությունը գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական ժառանգության ցանկում:

Գլուխ 2. Համաչափությունը խաչքարերում

Խաչքարերի ուսումնասիրությանը նվիրված են բանզմաքանակ հետազոտություններ, որոնցում սակայն, մեր կարծիքով, թերի է լուսաբանվում դրանց գեղագիտական կողմը, ինչը արդյունք է նաև համապատասխան վերլուծությունների մեջ համաչափության սկզբունքի թույլ ներգրավման: Այստեղ դիտարկվում է միայն համաչափության մի պարզ տեսակ' հայելային արտացոլումը, ընդ որում հետազոտողներին ավելի շատ հետաքրքրում է համաչափության ստեղծած ոչ թե գեղագիտական, այլ իմաստաբանական արժեքը: Մեզ թվում է, որ համաչափության ընդհանրական սկզբունքի վրա հենված ուսումնասիրությունները հնարավորություն կտան նաև խաչքարաստեղծման արվեստը գնահատելու քարի վրա փորագրության համաշխարհային փորձի տեսակետից, համեմատելու խաչքարերի լավագույն նմուշները արվեստի նշված տեսակի' աշխարհում ստեղծված այլ արժեքների հետ և որոշելու դրանց արժանի տեղը արվեստի համաշխարհային գանձարանում:

Հարկ է նկատել, որ ի տարբերություն կանոնավոր քառանկյան կամ վեցանկյան, որոնք խաչքարերում հանդիպող հիմնական հենքային երկրաչափական պատկերներն են, կանոնավոր հնգանկյունների կամ տասնանկյունների գծագրումը չափազանց բարդ է և հայտնի չէ, թե արդյոք դրա կառուցումը հայտնի է եղել վարպետ Պողոսին: Բոլոր դեպքերում, նրա խաչքարում ոսկե հատման առկայությունը բացառիկ երևույթ է միջնադարյան ճարտարապետության տեսանկյունից /եթե խաչքարը չենք համարում քանդակագործական արվեստ: Համաչափությունների հետաքրքիր խմբեր են գործում նույն ժամանակների հաջորդ խաչքարում: Խաչքարի հորինվածքի հիմնական կառուցվածքում գործում է խաչի ուղղաձիգ առանցքի նկատմամբ հայելային արտացոլումը: Իսկ քսաչքարի ստորոտում տեղադրված վարդակը կազմված է երեք համակենտրոն շրջանագծերից և նրանց կենտրոնում տեղադրված խաչքից, որի թևերը հավասարահեռ են շրջանագծերից և, ուրեմն, իրար հավասար են: Այդ պատճառով խաչին կարելի է արտագծել քառակուսի, և նրա համաչափությունների խումբը համընկնում է այդ քառակուսու համաչափությունների խմբի հետ և ունի ութ տարր, կենտրոնի նկատմամբ չորս պտույտ' 90, 180, 270, 360 աստիճանի անկյուններով և չորս առանցքային արտացոլում կամ համաչափություն

/համաչափության երկու առանցքները անցնում են խաչի թևերով, իսկ մյուս երկուսը' Իորիզոնական թևերի հետ 45 և 45 աստիճանի անկյուն կազմող ուղիղներով: 11-րդ դարի խաչքարերում գծերը և երկրաչափական պատկերները ավելի հստակ են ու կանոնավոր, և համաչափություններն ունեն ավելի լայն մասնակցություն: Այդ շրջանի խաչքարերից մեկի խաչատակի վարդակը ունի հետևյալ տեսքը: [2, էջ 17]

Նորավանքի և Գոշավանքի խաչքարերը արտաքուստ շուտ նման են իրար: Սակայն դրանց հորինվածքներում' համուսչաւքտությունների ներգրավման տեսակետից կան էական տարբերություններ: Եթե Գոշավանքի խաչքարում համաչափության սկզբունքի ներգրավումը սկսվում է վարդակի շրջանի ներսից և աստիճանաբար թուլանում է դեպի դուրս շարժվելիս, ապա Նորավանքի խաչքարում կիրառվում է ճիշտ հակառակ մոտեցումը շրջանի ներսում համաչափության սկզբունքի կիրառությունը ավելի թույլ է և աստիճանաբար զարգանում է դեպի դուրս շարժվելիս:

Գոշավանքի և Նորավանքի խաչքարեր.

Փորձարարական մաս

Ուսումնասիրություններն անցկացրել ենք աշակերտների շրջանում՝ պարզելու, թե ինչքանով են գիտակցում խաչխարի նշանակությունը:



Աշակերտների մեծամասնությունը խաչքարերը տարբերակում է նախշերի և խաչի տեսքից:



Աշակերտների հիմնական մասը ճանաչում էր այդ նշանը:

Անկետավորմամբ պարզեցինք նաև զբոսաշրջիկների հետաքրքրության աստիճանը մեր խաչքարերի նկատմամբ:



Զբոսաշրջիկները շատ են գնահատում մեր հայկական խաչքարերը, հատկապես Լոռու մարզում Սուրբ Հովհաննես մատուռի մոտ տեղադրված խաչքարերն են հիացրել նրանց: Հաղպատի, Հաղարծինի, Սանահինի վանքերի խաչքարերը նույնպես հիացնում են մարդկանց:

Եզրակացություն

Այսպիսով՝ մեր մշակույթի և մեր պատմության քարե վկաները՝ խաչքարերը, կարևոր դեր ու նշանակություն ունեն մեր կյանքում:

Հայաստանում հանդիպում են կոթողների տարբեր տեսակներ ու ձևեր, որոնց թվում, սակայն, ամենատարածվածն ու տիրապետականը խաչքարերն են: Ավելի քան մեկ հազարամյակ այդ հուշարձանները հանդիսացել են մասսայական սիրված կոթողներ, կերտող վարպետները դրանցում ներդրել են հայկական մշակույթի յուրահատուկ գծերը: Հայկական խաչքարերի ընդհանուր թիվը տասնյակ հազարների է հասնում, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ: Դրանք հաճախ կշռում են մի քանի տոննա: Խաչքարը հիմնականում ստեղծվում է հրաբխային բազալտից կամ տուֆից: Հայերի համար խաչքարը դա Քրիստոսի հարության խորհրդանիշն է՝ մահի դեմ նրա հաղթանակը:

Հնագույն խաչքարերը հիմնականում երկարավուն , ուղղանկյուն և կամարաձև գագաթներով քարե սալիկներ են, որոնք իրենց ներքևի մասի ելուստներով (պոչուկ) ագուցվում են խորանարդաձև պատվանդանների վրա: Հաճախ առանց պատվանդանի կանգնեցվում են ուղղակի գետնի մեջ: Խաչքարի արևմտյան երեսին սովորաբար փորագրված է խաչի պատկերը, որի վերևի թևից իջնում են խաղողի , նռան և այլ զարդաձևեր, իսկ ներքևի թևի երկու կողմերից բարձրանում են արմավենիկի տերևաքանդակներ: Խաչի ներքևում սովորաբար պատկերվում են կամ աստիճանաձև հիմքեր, կամ նռան ու վարդյակաձև զարդամոտիվներ:

Հայկական խաչքարերը խիստ արժեքավոր են իրենց վիմագրական արվեստով: Իրենց հնագրությամբ, ծածկագրությամբ, փակագրերով՝ հայերեն տառատեսակների զարգացման պատմությունն ուսումնասիրելու տեսակետից: Դրանց վրա եղած արձանագրությունները հարուստ նյութ են տալիս Հայոց լեզվի պատմությունը, հայ բարբառները և ծածկագրերը ուսումնասիրողներին: Այսպիսով, հայկական խաչքարերն ու նրանց արձանագրություններն եզակի կարևորության սկզբնաղբյուրներ են մեր ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Քյուրքչյան Ա. Ն., Լ. Ա. Տեր-Գրիգորյաան, Ծաղկաքաղ Հայկական Հուշարձանների, էջ 117
2. Պետրոսյան Համլետ Լ, Խաչքար, 2015թ, էջ 76
3. Տերյան Անժելա, Հնագույն պատմական վկայություններ հայերի մասին, Երևան 2017թ. էջ 79
4. Մաթեմատիկան դպրոցում, գիտամեթոդական ամսագիր, 2013/1, էջ 55